

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ` THE SIGNS OF THE TIMES

ԲԱՆԱԻ ՀԱՍՏՐԵՐ. ՄՍՏ. 24:3-8

³ Եւ երբոր նա Ձիթենեաց սարի վերայ նստած էր, աշակերտներն առանձին նորա մօտ եկան եւ ասեցին. Ասիր մեզ, այդ ե՞րբ կլինի. եւ ի՞նչ կլինի քո գալստեան եւ աշխարհքիս վերջի նշանը: ⁴ Յիսուսն էլ պատասխանեց եւ ասեց նորանց. Չգոյշ կացէք, որ մէկը ձեզ չխաբէ: ⁵ Որովհետեւ շատերը կգան իմ անունովը եւ կասեն` Ես եմ Քրիստոսը. եւ շատերին կմոլորեցնեն: ⁶ Պատերազմներ եւ պատերազմների համբաւներ կլսէք, զգոյշ կացէք, որ չշփոթուիք. որովհետեւ ամենը պետք է լինի. բայց դեռ վերջը չէ: ⁷ Որովհետեւ ազգ ազգի վերայ վեր կկենայ, եւ թագաւորութիւն թագաւորութեան վերայ. եւ սովեր կլինին. եւ մահտարժամներ` եւ տեղ տեղ երկրաշարժութիւններ կլինին: ⁸ Բայց այս ամենը ցաւերի սկիզբն է:

Ղուկ. 21:25-26 - ²⁵ Եւ նշաններ կլինին արեգակումը եւ լուսնումը եւ աստղերումը, եւ երկրի վերայ հեթանոսները խռովութեամբ կտագնապին, ծովը կգոչէ եւ կծփան ալիքները: ²⁶ Որովհետեւ մարդկանց սրտերը կնուաղին վախից եւ այն բաների սպասելուցն, որ բոլոր աշխարհքի վերայ պիտի գան. որովհետեւ երկնքի զօրութիւնները կշարժուին:

Ղուկ. 21:28 - ²⁸ Եւ երբոր այս բաները կսկսեն լինիլ, վեր նայեցէք եւ բարձրացրէք ձեր գլուխները. որ ձեր փրկութիւնը մօտ է:

I. ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ - ՍԱ ԴԵՌ ՎԵՐՋՈՒ ՉԷ: THEN THERE WILL BE SIGNS OF THE TIMES - THIS IS NOT THE END.

⁸ Բայց այս ամենը ցավերի սկիզբն է:

- Խաբէություն,
- Պատերազմներ,
- Ազգ ազգի դեմ,
- Թագաւորութիւն թագաւորութեան դեմ,
- Սովեր կլինին,
- Մահտարժամներ,
- Երկրաշարժներ:

Ղուկաս 17:26-35 — ²⁶ Եվ ինչպես որ Նոյի օրերին եղավ, այնպես էլ Մարդու Որդու օրերին կլինի: ²⁷ Ուտում էին, խմում, կին էին առնում և մարդու գնում մինչև այն օրը, երբ Նոյը տապան մտավ, ջրհեղեղը եկավ ու բոլորին կորստյան մատնեց: ²⁸ Նոյն ձևով, ինչպես Ղովտի օրերին էլ եղավ. ուտում էին, խմում, առնում էին, ծախում էին, տնկում էին, շինում էին: ²⁹ Եվ այն օրը, երբ Ղովտը Սոդոմից դուրս ելավ, երկնքից հուր ու ծծումբ տեղաց և բոլորին կորստյան մատնեց: ³⁰ Նոյն կերպ էլ այն օրը կլինի, երբ Մարդու Որդին հայտնվի: ³¹ Այդ օրն ով տանիքին լինի, և իր բաները տան մեջ, թող չհիշնի դրանք վերցնելու. դաշտում եղողն էլ թող հետ չդառնա: ³² Հիշէք Ղովտի կնոջը: ³³ Ով իր անձը փրկել ուզենա, այն կկորցնի, իսկ ով այն կորցնի, կփրկվի: ³⁴ Ասում եմ ձեզ. այդ գիշերը երկու հոգի մի անկողնում

կլինեն. մեկը կվերցվի, մյուսը կթողնվի: Երկու կին միասին աղալիս կլինեն. մեկը կվերցվի, մյուսը կթողնվի»:

**II. ՀԱՏԵՐԸ ԾԱՏ ՇՈՒՏ ԿԳԱՅԹԱԿՂՎԵՆ - ՍԱ ԴԵՌ ՎԵՐՋԸ ՉԷ:
THEN MANY WILL BE OFFENDED - THIS IS NOT THE END.**

Մատթեոս 24:10 – Եվ այդ ժամանակ շատերն են գայթակղվելու, միմյանց մատնելու և միմյանց ատելու:

Մատթեոս 11:6 – Եվ երանի՜ նրան, ով ինձանով չի գայթակղվի»:

Մատթեոս 13:21, 57 – Բայց քանի որ իր մեջ արմատ չունի, այլ ժամանակավոր է, ապա երբ այդ խոսքի պատճառով նեղություն կամ հալածանք է լինում, իսկույն գայթակղվում է: Եվ գայթակղվում էին նրանով: Իսկ Յիսուսը նրանց ասաց. «Չկա անարգված մարգարե, եթե ոչ իր գավառում ու իր տանը»:

**III. ՀԱՏԵՐԻ ՍԵՐԸ ՊԻՏԻ ԿՊԱՂԻ - ՍԱ ԴԵՌ ՎԵՐՋԸ ՉԷ:
THEN THE LOVE OF MANY WILL GROW COLD - THIS IS NOT THE END.**

Մատթեոս 24:11-13 – Եվ բազում սուտ մարգարեներ են ելնելու և շատերին մոլորեցնելու: Եվ անօրենության բազմանալու պատճառով շատերի սերն է սառչելու: Բայց ով մինչև վերջ համբերի, նա կփրկվի:

**IV. ԱՎԵՏԱՐԱՆԸ ՊԻՏԻ ՔԱՐՈՉՎԻ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՆՑ ԿԱՆԳ ԱՌՆԵԼՈՒ
- ԱՅԱ ՍԱ Է ՎԵՐՋԸ:
THE GOSPEL WILL BE UNSTOPPABLE. THIS IS THE END**

Մատթեոս 24:14 – Եվ արքայության այս Ավետարանը քարոզվելու է ամբողջ աշխարհով՝ որպես վկայություն բոլոր հեթանոսներին, և այդ ժամանակ գալու է վերջը: